ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

___ « _____ » 2024թ. **N __ -Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի N 95-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի «Երևան համայնքում 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների սպասարկման դեպքում երթուղիների սպասարկման փոխադրավարձը սահմանելու մասին» N 95-Ն որոշման 3-րդ կետում «սեպտեմբերի 1-ից» բառերը փոխարինել «նոյեմբերի 1-ից» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ– ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի N 95-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Երևան քաղաքի ավագանու կողմից 2024 թվականի մարտի 12-ին հաստատվել է «Երևան համայնքում 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների սպասարկման դեպքում երթուղիների սպասարկման փոխադրավարձը սահմանելու մասին» N 95-Ն որոշումը:

Երևան քաղաքում ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների սպասարկման որակը բարձրացնելու նպատակով ձեռնարկվում են մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝ Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի իրականացվող բարեփոխումների շրջանակներում Երևան քաղաքը ձեռք է բերում հասարակական տրանսպորտի անհրաժեշտ շարժակազմ՝ գործող երթուղային ցանցում առկա իրավիճակը կարգավորելու և նոր երթուղային ցանցին անցում կատարելու համար: Նշված շարժակազմի ձեռք բերումը անհրաժեշտ է առկա հնամաշ տրանսպորտային միջոցների փոխարինման, արդյունավետ, անվտանգ և հարմարավետ ուղևորափոխադրում իրականացնելու համար: Երևան քաղաքում հասարակական տրանսպորտի փուլային ձևով իրականացվող բարեփոխումների շրջանակներում կարևորվում է ոչ միայն հասարակական տրանսպորտի փոխարինմանն ուղղված քայլերի ձեռնարկումը, այլ դրան զուգընթաց՝ հասարակական տրանսպորտի սպասարկմանն ուղղված բարեփոխումների ամբողջական ծրագրի իրականացումը, այն է՝ միասնական տոմսային համակարգի ներդրումը:

Ներկայումս Երևան համայնքի կողմից ձեռնարկվում են թվով 171 նոր ավտոբուսների ձեռքբերմանն ուղղված քայլեր:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ միասնական տոմսային համակարգի ներդրումը ամբողջապես հնարավոր է ապահովել միայն նախատեսվող նոր 171 ավտոբուսների ձեռքբերմամբ (հիշյալ թվաքանակի փաստացի Երևան մատակարարմամբ) և միաժամանակ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ գործնականում 171 նոր ավտոբուսների նախատեսված ժամկետում մատակարարման հետ կապված առաջացել են մատակարարման ժամկետի ուշացումներ, որոնցով պայմանավորված մինչև 2024 թվականի սեպտեմբերի 1-ը նախատեսված միասնական տոմսային համակարգի ծրագրային ամբողջական ներդրումը հնարավոր չէ ապահովել՝ Նախագծով նախատեսվում է փոփոխություն կատարել Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N 95-Ն որոշման մեջ՝ որոշման ուժի մեջ մտնելու ժամկետ սահմանելով 2024 թվականի նոյեմբերի 1-ը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ